ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Մայիսի 17—18-ին ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ հանրապետության ԳԱ տարեկան ընդհանուր ժողովը։ Ժողովին մասնակցում էին ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ս. Հարությունյանը, ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ, ԽՍՀՄ գիտության և տեխնիկայի պետական կոմիտեի նախագահ Բ. Տոլստիխը, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Հ. Ոսկանյանը, ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Վ. Մարգարյանը, ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Գ. Գալոյանը, ՀԿԿ Երևանի քաղկոմի առաջին քարտուղար Մ. Միհասբեկյանը, ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Ցու. Խաչատրյանը, ՀԿԿ Կենտկոմի դաղափարախոսական բաժնի վարիչ Գ. Ասատրյանը։

Բացելով ժողովը, ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը ներկաներին խնդրեց հոտնկայս հարգել Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Աշոտ Ասլանյանի հիշատակը։

Հաշվետու տարին՝ 1988 թ., մեր պատմության դառնություններով, հուզումնալից իրադարձություններով լի, իղձերով հարուստ տարի էր, ներածական խոսքում ասաց Վ. Համբարձումյանը։ Երկրում կատարվեցին խորհրդային հասարակության բարեփոխման ուղղությամբ նոր քայլեր։ Միության ժողովուրդները հնարավորություն ստացան արտահայտվելու ոչ միայն իրենց հաշվությունների, այլև հոգսերի, ցավի և անհետաձգելի պահանջների մասին։ Վերակառուցման և հրապարակայնության շնորհիվ ծնունդ առավ ղարաբաղյան շարժումը։ Պահանջվեց պաշտպանել ղարաբաղցիների ազգային և սոցիալական ոտնահարված իրավունքները, Արցախի ժողովրդի ազգային ինքնորոշման իրավունքը, վերադարձնել ապօրինաբար, հակասահմանադրական ճանապարհով վերցված Ղարաբաղը։ Մեր ակադեմիան վճռականապես արտահայտեց այս հարցի վերաբերյալ իր տեսակետը՝ անվերապահորեն միանալով Արցախի ժողովրդի պահանջին։ Այնուհետև պրեզիդենտը անդրադարձավ Ադրբեջանից Հայաստան եկած փախստականների հարցին, խոսեց նրանց օգնություն ցույց տալու գործում ակադեմիայի հիմնարկների ծավալած աշխատանքների մասին։

Աղետալի երկրաշարժը տարավ հազարավոր մարդիկ, նշեց Վ. Համբարձումյանը, ե դա մի նոր, մեծ հարված էր հայ ժողովրդին։ Ակադեմիայի կոլեկտիվները մասնակցեցին տուժածներին փրկելու, նրանց օգնություն ցույց տալու գործին։ Յուրաքանչյուրը կատարում էր այն, ինչ կարողանում էր։ Կործանարար երկրաշարժի հետևանքները վերացնելու գործում մեզ օգնության ձեռք մեկնեցին խորհրդային ողջ ժողովուրդը և արտասահմանյան բազում երկրներ։ Ակադեմիայի բոլոր ինստիտուտները ակտիվորեն մասնակցեցին այդ օգնության բաշխման գործին։ Սակայն արվածը բավարար չէ, աղետյալների հոգսերը մշտապես պետք է գտնվեն ուշադրության կենտրոնում։ Ակադեմիայի երկրաբանության ինստիտուտում կազմակերպվեց շտաբ՝ երկրաշարժի հետագա ընթացքի ուսումնասիրման համար։ Նրանում համախմբվեցին և Միության, և արտասահմանից եկած մասնագետներ։ Վ. Համբարձումյանը շնորհակալություն հայտնեց այն օգնության համար, որ ցուցաբերել են Խորհրդային Միության գիտությունների ակադեմիան, նրա ղեկավարները, մեծ թվով խորհրդային գիտնականներ, ինչպես և արտասահմանցի սեյսմարաններ։

Այնուհետև ակադեմիայի պրեզիդենտը համառոտակի կանգ առավ գիտության առանձին բնագավառներում ձեռք բերած նվաճումների վրա։ Նա մասնավորապես անդրադարձավ այն հետազոտություններին, որոնք կիրառական կարևոր նշանակություն ունեն։ Նշեց ակադեմիական աշխատանքի առանձին բնագավառների վերակառուցման մասին։ Խոսելով քիմիական գիտությունների մասին, Վ. Համբարձումյանն ասաց, որ ակադեմիան ժամանակին առաջ է քաշել Հայաստանում փոքրատոննաժ քիմիայի զարգացման անհրաժեշտությունը, որը, ցավոք, հետագա զարգացում չստացավ։ Այսօր ծայրահեղ անհրաժեշտ է զարգացնել այդ ուղղությունը, քանի որ դա Հայաստանի համար շատ շահավետ կլինի ինչ-

պես տնտեսական, այնպես էլ էկոլոգիական տեսակետներից։

Վ. Համբարձումյանը անդրադարձավ նաև գիտական հաստատությունների գործունեության մեջ տեղ գտած թերություններին։ Նա նշեց, որ մեր օրերում առաջնային խնդիր է մնում գիտական որոնումների բնագավառում ավտոմատացման օգտագործումը, հանրապետության ղեկավարության ուշադրությունը հրավիրեց գիտական սարքավորումների և գործիքների մատակարարման պլանավորման բարելավման հարցի վրա։

Հսկայական խնդիրներ են ծառանում հասարակագետների առջև, վերջում ասաց Վ. Համբարձումյանը։ Պատմաբանները, իրավաբանները պետք է աղատագրվեն լճացման տարիների ծանր ժառանգությունից, երբ շատ երևույթներ, պատմական հանգուցային հարցեր, իրավական նորմեր ներկայացված էին ձևախեղված տեսքով։

Ընդհանուր ժողովում ելույթ ունեցավ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ս. Հարությունյանը։ Վերլուծելով հանրապետությունում ստեղծված իրավիճակն ու դրա պատճառները, նա նշեց, որ տասնամյակներով կուտակված սոցիալ-տնտեսական պրոբլեմները, ազգային ինքնագիտակցության պոռթկումային զարթոնքն ու Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի դրամատիկ բարդացումը, ավերիչ երկրաշարժը և հարյուր հազարավոր մարդկանց ողբալի վիճակը ստեղծել են անասելի բարդ իրադրություն։ Նման պայմաններում պահանջվում է ուժերի ու կարողությունների գերագույն լարում. շրջահայացություն, խելացի և խիստ կշռադատված գործելակերպ, միասնություն և համախմբվածություն։ Պատմական այս շրջադարձային փուլում մեր ժողովրդի գոյատևման, հանրապետության վերածննդի խնդիրների լուծման հարցում ճանաչելի պետք է լինեն գիտությունների ակադեմիայի գործունեությունն ու աշակցությունը։

Հանրապետությունը լճացման խոր վիհից դուրս բերելու, հասարակական կյանքի բոլոր ոլորտների առողջացման ծրագրային խնդիրների իրականացման մեջ լուրջ շտկումներ մտցրեց դեկտեմբերյան արհավիրքը։

Բնութագրելով երկրաշարժի ավերիչ հետևանքները, դրանց հաղթահարման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումները, կարևորելով համայն մարդկության, խորհրդային ողջ ժողովրդի գթասիրտ օգնությունն ու աշակցությունը, Ս. Հարությունյանը առանձնահատուկ ուշադրություն դարձրեց դեռևս չլուծված պրոբլեմներին ու խնդիրներին, ընդգծեց վերջիններիս լուծման գործում հանրապետության գիտական պոտենցիալի առավել արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը։ Նշվեց, որ մայիսի 12-ին Մոսկվայում Խորհրդային Միության կոմկուսի Կենտկոմի քաղբյուրոյի հանձնաժողովը և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահությունը, շտապ ու խստապահանջորեն վերլուծելով երկրաշարժի հետևանքների հաղթահարման գործերի ընթացքը, նախատեսել են մի շարք արմատական միջոցառումներ՝ վիճակը շտկելու, վերականգնողական ու շինարարական աշխատանքներին նոր թափ հաղորդելու ուղղությամբ։ Անդրադառնալով 1988 թվականի առաջին իսկ ամիսներից հանրապետությունում տեղի ունեցող իրադարձություններին, Ս. Հարությունյանը ուշադրություն հրավիրեց այն բանին, որ վերակառուցումը, դեմոկրատիան ու հրապարակայնությունը հնարավոր դարձրին հատկապես հիվանդագին, առավել սուր պրոբլեմների բացահայտ վերլուծումն ու քննարկումը, դրանց լուծման ուղիների որոնումը։ Նշվեց, որ ազգային հարցին առնչվող յուրաքանչյուր քննարկում, գործնական յուրաքանչյուր քայլ պետք է արվի կոնկրետ իրավիճակի խոր և գիտական գնահատման, պատճառահետևանքային կապերի համակողմանի բացահայտման, պատմական անաչառ փաստարկումների հիման վրա։ Միաժամանակ անհրաժեշտ է, որ դարերով ու տարիներով կուտակված ժողովրդի իղձերի ակտիվ դրսևորումը, բուն վերակառուցման շնորհիվ ազգային ինքնագիտակցության ձերբազատումը հստակորեն սահմանազատվեն առանձին անառողջ դրսևորումներից, որոնք անհարիր են ժողովրդի իսկական շահերին։

Երկրի քաղաքական համակարգի արմատական վերակառուցման ընթացքում պետք է գտնվեն ազգային պրոբլեմների լուծման համապատասխան մեխանիզմներ, մշակվեն ազգամիջյան հարաբերություններում վիճելի հարցերի լուծման դեմոկրատական ձևեր։ Լեռնային Ղարաբաղում ներկայումս տիրող իրավիճակը թելադրում է, որ Հատուկ կառավարման կոմիտեի գործունեության պայմաններում ռեալ նախապայմաններ ստեղծվեն մարդի իրական ինքնուրույնությունն ապահովելու համար։

Անդրադառնալով հանրապետության գիտական պոտենցիալի առավել արդյունավետ և նպատակասլաց օգտագործման խնդիրներին, գիտության արագ ու դինամիկ զարգացման ներկա պրոբլեմներին, ակադեմիայի գիտա-

կան նվաճումներին, Ս. Հարությունյանը նշեց, որ այսուհանդերձ տեղաշարժերը խիստ դանդաղ են, արդյունքները՝ ոչ գոհացուցիչ։ Իրողությունն այն է, որ հանրապետությունում գիտություն-արտադրություն օրգանական կապի, ռեգիոնալ գիտատեխնիկական առաջընթացի կառավարման ամբողջական մեխանիզմ դեռևս չի ստեղծվել։ Դրա վկայությունն են գիտական աշխատանքների հստակ կոորդինացման բացակայությունը, մշակումների դանդաղ արմատավորումը, դրանց փոքր հատույցը, գիտատեխնիկական առաջադիմության առաջատար ուղղությունների գծով ավարտուն գործերի սահմանափակ թիվը։

Խնդիր դրվեց առանձնահատուկ ուշադրություն նվիրել հիմնարար և կիրառական գիտությունների իրական հատույցի մեծացմանը՝ հաշվի առնելով Հայկական ԽՍՀ սոցիալ-տնտեսական կյանքում ստեղծված բարդ կացությունը։ Շեշտվեց հանրապետությունում էկոլոգիական իրավիճակի արմատական բարելավման գիտական մշակումների, երկրաշարժաբանական լուրջ ծառայության ստեղծման, խորապես հիմնավորված էներգետիկ ծրագրի մշակման, կիրառական մի շարք գիտությունների, այդ թվում՝ բժշկագիտության արագընթաց զարգացման հույժ կարևորությունը։

Օրակարգի հարց համարվեց հիմնարար տնտեսագիտական հետազոտությունների ակտիվ ծավալումը։ Հրշտոբեն պետք է ձեռնամուխ լինել հանրապետությունում տերիտորիալ տնտեսական հաշվարկի արմատավորման դիտական կոնցեպցիայի մշակմանը։

Երկրաշարժի հետևանքները, բնակչության զանգվածային տեղաշարժերը, դեռևս մինչև վերջ չբացահայտված ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական պրոբլեմները, արտադրողական ուժերի զարգացման ու տեղաբաշխման նոր խնդիրները պահանջում են ավանդական լուծումներից բացի փնտրել նաև նոր ուղիներ ու միջոցներ։ Այս առումով Ս. Հարությունյանը ուշադրություն հրավիրեց հանրապետությունում ազատ տնտեսական գոտի կազմավորելու գաղափարի գիտական մշակման անհրաժեշտության վրա։

Կարևոր նշանակություն տրվեց սոցիալական հոգեբանության, հասարակական կարծիքի լայն ու խոր ուսումնասիրման կազմակերպմանը։

Լուրջ խնդիրներ դրվեցին պատմագիտության առջև, որը կոչված է վերաիմաստավորել անցյալի շատ էջեր, մաքրել դրանք տարբեր շերտանստվածքներից, խեղաթյուրումներից։ Այդ նկատառումով հանձնարարվել է, ասաց Ս. Հարությունյանը, հանրապետության պատմաբաններին իրենց հիմնավոր կարծիքը ներկայացնել 1918 թ. մայիսի 28-ի, հայկական պետականության վերականգնման և եռագույն դրոշի տեղի ու գերի գնահատման, ազգային-ազատագրական շարժումների, դարասկզբի և 30-ական թվականների մեր պատմության սպիտակ էջերի լրացման վերաբերյալ։

Ս. Հարությունյանը նշեց այն աշխատանքը, որ տանում է ՀԿԿ Կենտկոմը ազգային մտածողությանը ցուցաբերվող նոր մոտեցման, հայոց լեզվի գործառության կարգավորման, սիլիցիոնի հետ Խորհրդային Հայաստանի կապերի ընդլայնման ուղղությամբ, անդրադարձավ գիտական կադրերի պատրաստման ու դրանց հետ տարվող աշխատանքների, գիտության նյութատեխնիկական բազայի ամրապնդման, գիտական աշխատողների սոցիալական պայմանների բարելավման հարցերին։

Վերջում Ս. Հարությունյանը հույս հայտնեց, որ գիտությունների ակադեմիայի բազմահազարանոց կոլեկտիվը հանրապետության համար այս դժվար ժամանակներում բոլոր ջանքերը կգործադրի Խորհրդային Հայաստանում իրադրությունը կայունացնելու և մեր ժողովրդին առաջընթացի նոր բնագիծ դուրս բերելու համար։

Հաշվետու տարում ԳԱ գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցեց ակադեմիկոս-քարտուղար, Հայկական ԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Դ. Սեդրակյանը։ Վերակառուցումը, ասաց նա, հնարավորություն տվեց հրապարակայնորեն բարձրացնել հիմնադրային պրոբլեմները, այդ թվում՝ ազգային հարաբերությունների ոլորտում։ Հանրապետության 1988 թ. իրադարձություններում արտացոլվեցին ոչ միայն մեր ժողովրդի բազմամյա ազգային իղձերը, այլև հանրապետության աշխատավորության քաղաքական ակտիվության բարձրացումը, նրա լայն շարժումը՝ արմատական վերափոխումների համար, նրա դժգոհությունը հանրապետությունում չլուծված տնտեսական բազմաթիվ պրոբլեմների առկայության համար։

Մասնավորապես, դարաբաղյան շարժումը ծայր առավ երկրում ծավալված կյանքի տարբեր ոլորտներում թույլ արված ստալինյան խեղաթյուրումների դեմ պայքարի հիման վրա։ Խորհրդային Հայաստանի հանրապետության կազմավորման վճռորոշ փուլում հակասահմանադրական կարգով 1921 թ. Հայաստանից օտարվեց բացարձակ մեծամասնությամբ հայ բնակչություն ունեցող Արցախի տարածքը, ո-

ը պատմականորեն եղել է Հայաստանի անբաժան մասը։ Այդ աղաղակող անարդարությունը վերացնելու նշանաբանով 1988 թ. ծավալված պայքարը իր բնույթով այնքան լ արդարացի ու հիմնավոր, որ ընթացքի մեջ է առել ժողովրդի ամենալայն զանգվածները՝ ինչպես մեր երկրում, այնպես էլ սփյուռքում։

Ղարաբաղյան շարժման հենց սկզբում ՀԽՍՀ ԳԱ նախագահությունը քննարկեց հանրապետությունում ստեղծված գրությունը և քաղաքական հիշտ գնահատական տվեց ինչպես շարժմանը, այնպես էլ Սումգայիթի գաղտնային ոճրագործությանը։ Այդ հարցերի կապակցությամբ նախագահությունը իր կարծիքը ուղարկեց ԽՄԿԿ Կենտրոնական կոմիտե։ Ակադեմիկոս Գ. Գալոյանի ղեկավարությամբ պատրաստվեց, քննարկվեց և հրատարակվեց «Լեռնային Ղարաբաղ» գրքույկը, որտեղ շարադրված են ղարաբաղյան պրոբլեմի պատմական հիմքերը, ԽՍՀՄ ԳԱ-ում անցկացվեցին կլոր սեղանի շուրջը հանդիպումներ՝ պատմաբանների մասնակցությամբ։ Մշակված են և, թեև դժվարությամբ, բայց իրականացվում են միջոցառումներ Ղարաբաղի հետ գիտության, կուլտուրայի և լուսավորության ուղղությամբ կապերի հաստատման համար, մասնավորապես ստեղծված է այդ աշխատանքների կոորդինացման խորհուրդ։ Անցյալ տարվա սեպտեմբերի 27-ին կայացավ ընդհանուր հատուկ ժողով, որը քննարկեց հանրապետությունում ստեղծված դրությունը՝ կապված ղարաբաղյան շարժման հետ։

Դեկտեմբերի 7-ի աղետալի երկրաշարժը հանրապետությունում դրությունը ավելի բարդացրեց։ Մոտ կես միլիոն մարդ զրկվեց տներից։ Պետք է ամեն ինչ արվի անտուն մարդկանց Հայաստանի տարածքում բնակեցնելու ուղղությամբ, օգտագործելով գոյություն ունեցող հնարավորությունները և դատարկ գյուղերը։ Այդ դժվարին օրերին մեր կողքին էին խորհրդային և արտասահմանյան մեր շատ գործընկերները։ ԽՍՀՄ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Գ. Ի. Մարչուկը, որը ժամանեց Երևան երկրաշարժի օրերին, հայտնեց ԽՍՀՄ ԳԱ պատրաստակամությունը օգնելու նյութական կորուստների վերականգնման և ՀԽՍՀ ԳԱ նյութատեխնիկական բազայի ամրապնդման հարցերում։ Խորհրդային և արտասահմանյան տարբեր գիտական խմբեր մեր հանրապետության գիտնականների հետ համատեղ, ԽՍՀՄ ԳԱ փոխպրեզիդենտներ Ե. Պ. Վելիխովի և Ն. Պ. Լավյորովի ղեկավարությամբ և անմիջական մասնակցությամբ անցկացրին կարևոր աշխատանքներ՝ հանրապետության սեյսմիկ վիճակի վերլուծման, Հայաստանի ատոմային էլեկտրակայանի սեյսմիկ անվտանգության ուսումնասիրության և աղետի գոտում սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզների նախապատրաստման ուղղությամբ։

Հայաստանի գիտնականներն իրենց ներդրումը ունեցան հանրապետության ատոմային էլեկտրակայանի փակման նախապատրաստման հարցում։

Զեկուցողն ասաց, որ հաշվետու տարում տեղի են ունեցել ԳԱ երեք ընդհանուր ժողովներ։ Անցած տարվա դեկտեմբերին տեղի ունեցած ժողովին. որն առնչվում էր աղետալի երկրաշարժի հետ, մասնակցում էր և ելույթ ունեցավ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ն. Ի. Ռիժկովը։ Այս ընդհանուր ժողովը ծրագրային նշանակություն ունեցավ հայ գիտնականների հետագա գործունեության համար։ Նշվեցին այն երեք հիմնական պրոբլեմները, որոնց վրա իր ուշադրությունը պետք է կենտրոնացնի ակադեմիական գիտությունը։

Մասնավորապես ընդգծվեց, որ գիտական քաղաքականության մշակման ժամանակ անհրաժեշտ ուշադրություն չի դարձված սեյսմոլոգիայի զարգացմանը, ցածր են եղել հասարակական գիտությունների վերակառուցման տեմպերը և կազմակերպական ոչ բավարար մակարդակի վրա է շրջակա միջավայրի պաշտպանության պրոբլեմների ուսումնասիրությունը։ Դրանից ելնելով որոշվեց ԳԱ-ի առաջնահերթ խնդիրը համարել սեյսմոլոգիայի հետագա արագ զարգացումը, որը պետք է իրականացվի ժամանակակից սեյսմիկ կայանների ընդարձակ ցանցի ստեղծմամբ։

Լուրջ մտահոգություն է պատճառում էկոլոգիական իրադրությունը։ Այս ասպարեզում արդյունքները չնչին են։ Հիմնական պատճառներից մեկը գործունեության կոորդինացման լրիվ բացակայությունն է։ Սևանի տիտոտ փորձը, ատոմային կայանը, մեծ քիմիայի աննախադեպ ընդարձակումը և շատ ուրիշ օրինակներ պահանջում են հիմնովին գիտակցել հանրապետության ապագայի նկատմամբ մեր գիտնականների պատասխանատվությունը։ Միաժամանակ հարկ է նշել, որ նախատեսված ծրագրերի բարձր արդյունավետությունն ապահովելու համար հարկավոր է դրանք բարելավել ֆինանսավորմամբ և նյութատեխնիկական մատակարարումով։

Չնայած շատ դժվար տարվան և աշխատանքի մի շարք ընդհատումներին, այնուհետև ասաց զեկուցողը, հանրապետության ակադեմիայի գիտական հիմնարկները ընդհանուր առմամբ կատարել են պլանային առաջադրանքները։ Հաշվետու տարում հետազոտու-

թյունները տարվել են 387 թեմաների գծով, որոնցից 135-ը մտել են 32 միութենական, հանրապետական, ռեգիոնալ, ճյուղային ծրագրերի մեջ։ Ավարտված է 23 թեմա և կատարված է Հայկական ԽՍՀ տնտեսական և սոցիալական զարգացման պետական պլանի 1988 թ. փուլի 133 առաջադրանք։ Ավարտված են մոտ 100 տնտեսամանագրային աշխատանքներ, որոնց արդյունքներն ընդունված են պատվիրատուների կողմից։ Միջդերատեսչական հանձնաժողովները ներդրման են առաջարկել չորս դիտատեխնիկական մշակումներ։ Պայմանագրային աշխատանքների ընդհանուր ծավալը կազմել է 14 միլիոն ռուբլի։ Ներկայացված է 140 գյուտարարական առաջարկ։ Դրանցից ներդրված են 17-ը, 8-ը առաջադրված են արտասահմանում պատենտավորելու համար։

Զեկուցման մեջ հանգամանորեն վերլուծության ենթարկվեցին մի շարք հիմնարար և կիրառական գիտական արդյունքներ, որոնք ստացվել են Բյուրականի աստղադիտարանում, մաթեմատիկայի, ֆիզիկայի կիրառական պրոբլեմների և մի քանի այլ ինստիտուտներում ու գիտական կենտրոններում։

Ակադեմիկոս-քարտուղարը հատկապես ընդգծեց դիտական հիմնարկների առջև ծառացած նոր, բարդ խնդիրները, որոնք պայմանավորված են ողջ երկիրը համակած վերակառուցմամբ և նոր մտածելակերպի արմատավորմամբ, մեր հանրապետությունում կատարված սոցիալ-քաղաքական տեղաշարժերով, երկրաշարժի հարուցած աղետով։ Ըստ Երևույթին այս առումով անհրաժեշտ է դառնում, ասաց նա, վերանայել Հայաստանի 1991—2010 թթ. գիտատեխնիկական առաջընթացի կոմպլեքսային ծրագիրը։

Հասարակական գիտությունների հրատապ պրոբլեմներից են արդի պատմական պրոցեսի խորը և համակողմանի լուսաբանումը, անհատի պաշտամունքի հետևանքների վերացումը, ինտերնացիոնալ կապերի ամրապնդմանը նպաստելը, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի գիտական արժեքավորումը, թյուր տեսակետների անաչառ վերանայումը։

Այնուհետև Դ. Սեդրակյանն անդրադարձավ ակադեմիայի գիտական կապերին, նշեց ակադեմիական մի շարք հիմնարկների ղեկավար կադրերի թարմացման հրատապ խնդիրը, խոսեց երիտասարդ դիտական կադրերի, ասպիրանտների պատրաստման գործում առկա թերությունների և անելիքների մասին։

Զեկուցման շուրջ ծավալվեց մտքերի աշխույժ ու անկաշկանդ փոխանակություն, որին մասնակցեցին ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Վ. Ղազարյանը, ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Ս. Մերգելյանը, հանրապետության ԳԱ թղթակից անդամ Վ. Խոջաբեկյանը, ակադեմիկոս Ս. Պետրոսյանցը, ակադեմիայի անօրգանական և ընդհանուր քիմիայի ինստիտուտի դիրեկտոր Ս. Կարախանյանը, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Յու. Ալեքսանյանը, ակադեմիկոս Ա. Բաբայանը, ՀԽՍՀ դատախազի տեղակալ Հ. Բաղդասարյանը, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Ներսիսյանը, Արցախի «Ամարաս» բարեգործական ընկերության տնօրեն Վ. Սարուխանյանը։

Ժողովում լսվեցին գիտական զեկուցումներ՝ կապված 1988 թ. երկրաշարժին առնչվող մի շարք պրոբլեմների հետ։ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Գաբրիելյանի, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Ս. Գրիգորյանի զեկուցումը նվիրված էր Հայկական լեռնաշխարհի և հարակից շրջանների սեյսմատեկտոնիկային, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Ի. Ներսեսովը և երկրաբանական-հանքաբանական գիտությունների թեկնածու Է. Գեոդակյանը իրենց զեկուցման մեջ անդրադարձան սեյսմաբանական ուսումնասիրությունների արդյունքներին, իսկ ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Ս. Գրիգորյանը խոսեց երկրաշարժի մեխանիկայի մասին։

«Սևանա լճի անտրոպոգեն էվտրոֆացումը և նրա բացասական ազդեցության վերացման ուղիները» թեմայով հանդես եկավ կենսաբանական գիտությունների դոկտոր Ռ. Հովհաննիսյանը։ ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Հ. Սիմոնյանը խոսեց Խորհրդային Հայաստանի պատմության մի քանի հարցերի մասին։

Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովի մասնակիցները դիմում հղեցին ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության Նախագահ Մ. Ս. Գորբաչովին և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ն. Ի. Ռիժկովին ԼՂԻՄ-ում և նրա շուրջը ծավալված իրադրության սրվելու կապակցությամբ։

Ինչպես հայտնի է, ասվում է Նամակում, Լեռնային Ղարաբաղի աշխատավորների պահանջների արդարացի լուծումը երկրում սկսված վերակառուցման և դեմոկրատացման քաղաքականության դրսևորումներից մեկն է։ Այն նպատակամղված է պատմական անարդարության վերացմանը։ Տասնամյակներ շարունակ ոտնահարվել են հայ բնակչության օրինական ազգային իրավունքները, իրագործվել է մարդի ադրբեջանացման քաղաքականություն։

Իրադրությունը կտրուկ սրվեց Սումգայիթ քաղաքում հայերի ջարդից հետո։ Այդ ջարդը, որ համընդհանուր զայրույթ առաջացրեց, ցավոք, դեռ քաղաքական գնահատական չի ստացել։

Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը և ամբողջ հայ ժողովուրդը, ասվում է նամակում, ըմբռնումով վերաբերվեցին ԼՂԻՄ-ում կառավարման հատուկ ձև մտցնելու ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության որոշմանը։ Այդ որոշումը արդարացիորեն գիտվում էր որպես առաջին քայլ, որը նպատակամղված է Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի վերջնական լուծմանը։ Մինչդեռ, անցած ամիսների փորձը ցույց տվեց, որ Հատուկ կառավարման կոմիտեն, անկախ նրա ղեկավարության կամքից, հնարավորություն չունի կատարելու իր վրա դրված խնդիրը։ Ստեղծված իրավիճակում, երբ մարդում փաստորեն վերացվել են կուսակցական և խորհրդային մարմինները, Ադրբեջանում չի դադարում հակահայկական կամպանիան, շարունակվում է իրականացվել ազգային խտրականության քաղաքականությունը։ Դրա բնորոշ դրսևորումն է Ադրբեջանի մի շարք գործիչների՝ Մ. Ս. Գորբաչովին այս տարվա մայիսի 14-ին ուղղված նամակը, որը հիմնված է փաստերի ենթափոխման վրա։

Ղեկավարվելով ազգերի ինքնորոշման լենինյան սկզբունքով, անհրաժեշտ է Լեռնային Ղարաբաղը անհապաղ դուրս բերել Ադրբեջանի վարչական ենթակայությունից։

Ակադեմիայի ժողովը քննարկեց կազմակերպական հարցեր։ Այդ կապակցությամբ հանդես եկավ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ս. Հարությունյանը։ Վ. Համբարձումյանի պրեզիդենտական ժամկետը լրանալու կապակցությամբ, ժողովը որոշեց մեկ տարով երկարաձգել նրա պրեզիդենտական լիազորությունները։

Ժողովը ակադեմիայի փոխպրեզիդենտ ընտրեց Հայկական ԽՍՀ ակադեմիայի ակադեմիկոս Գ. Սարգսյանին։

ՀԽՍՀ ԳԱ տարեկան ժողովում տեղի ունեցավ հանրապետության գիտությունների ակադեմիայի պատվավոր ԳԱ պարգևների հանձնման հանդիսավոր արարողություն։ «Մեծարման գիր» հանձնվեց ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանին։ «Վաստակագիր» ստացան ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Կ. Ղարագյոզյանը, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Թովմասյանը, պատմական գիտությունների դոկտոր Հ. Բարթիկյանը, երկրահանքաբանական գիտությունների դոկտոր Ս. Գրիգորյանը, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ա. Գուլյանը։ Գիտահետազոտական արդյունավետ գործունեության համար մի խումբ գիտական աշխատողների հանձնվեցին գովեստագրեր։

ՀԽՍՀ ԳԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Մայիսի 15-ին տեղի ունեցավ ՀԽՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի տարեկան ժողովը։ Բաժանմունքի 1988 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին հաշվետու զեկուցմամբ հանդես եկավ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Առաքելյանը։ Բաժանմունքի և նրա գիտական հիմնարկների աշխատանքները 1988 թ. ընթացել են ծանր իրադրությունների՝ մեր երկրին և ժողովրդին բաժին ընկած արհավիրքների, ողբերգությունների պայմաններում, ասաց նա։ Ղարաբաղյան շարժումը, Սումգայիթում տեղի ունեցած կոտորածը խորապես հուզեցին նաև պատմաբաններին և նրանց առջև դրեցին հրատապ խնդիրներ՝ փաստաթղթերի կազմում, Լեռնային Ղարաբաղին նվիրված գրքույկի հրատարակում, հանդիպումներ Մոսկվայում և այլուր, շանթեր Սումգայիթի անցքերին քաղաքական գնահատական և հանցավորների դատավարությանը արդարացի և ճիշտ ընթացք տալու նպատակով։ Մտահոգում և հուզում է «Ղարաբաղ» կոմիտեի բանտարկության անօրինականության գիտակցումը, հայերի և ադրբեջանցիների գործունեության համար անհավասար պայմանների և վիճակի առկայությունը (միտինգներ և ցույցեր Բաքվում, սահմանափակումներ Երևանում, բունիաթովյան, անարյան հակահայկական կոնցեպցիայի սատարում, պատմական սկզբնաղբյուրների կեղծում, հայատյաց գրքերի և հոդվածների հրապարակում Բաքվում)։ Այս ամենին ավելացան ահավոր երկրաշարժի աղետն ու արհավիրքը, հազարավոր մարդկային զոհերը, քաղաքների ու գյուղերի կործանումը։ Թեև դադարեցվեց ատոմակայանի աշխատանքը, բայց հանրապետությունում տիրում է էկոլոգիական ծանր վիճակ, դրան գումարվում են թունավորումների բազմաթիվ դեպքերը։ Հասկանալի է, որ մեր ժողովուրդը, այդ թվում և գիտնականները աշխատել են հոգեբանական տագնապի՝ ստրեսի,

պայմաններում։ Այս ամենով հանդերձ գիտական աշխատանքը մնում էր բաժանմունքի հիմնարկների և գիտական աշխատողների հիմնական պարտքն ու պարտականությունները, և ինչ-որ բան արված է։

Բ. Առաքելյանը հանգամանորեն խոսեց բաժանմունքի հիմնարկների՝ տնտեսագիտության, պատմության, հնագիտության և ազգագրության, արևելագիտության ինստիտուտների, սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժնի, հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնի, բաժանմունքի և նրա բյուրոյի գործունեության մասին։ Ակադեմիկոս-քարտուղարն ասաց, որ բաժանմունքի հիմնարկները հրատարակել են 30 գիրք, նաև մեծ քանակությամբ գիտական հոդվածներ տեղական և միութենական մամուլում։ Ինստիտուտները գործել են նյութատեխնիկական ոչ բավարար վիճակում, չեն կարողանում օգտագործել նորագույն տեխնիկա և դրանց հետ կապված մեթոդները։ Միանգամայն անմխիթար է ակադեմիայի տպարանի վիճակը։

Չի կարելի հաշտվել պատմական գիտության վերակառուցման, անհատի պաշտամունքի ժամանակաշրջանում թույլ տրված սխալների և թերությունների վերացման անվճռական և դանդաղ ընթացքի հետ, շարունակեց Բ. Առաքելյանը։ Անհրաժեշտ է վերլուծական քննությամբ շտկել թերություններն ու սխալները և նոր խնդիրներ առաջադրել գիտական հաստատություններին և գիտնականներին։ Ակադեմիկոս-քարտուղարը մի շարք հետաքրքիր ու որոշակի առաջարկություններ արեց (պատմական գիտության վերակառուցումը իրականացնել ըստ պատմական հաջորդական դարաշրջանների, սփյուռքի գիտական օջախների և առհասարակ սփյուռքի հետ կապված հարցերի շրջանակների ընդլայնում, գիտնականների ավագ սերնդի հրատարակած, մանավանդ ձեռագիր գործերը գիտական շրջանառության մեջ դնելը, ակադեմիական և համալսարանական պատմագիտության ակտիվացում, պատմաբանների ընկերության ստեղծում, գիտնականի տան հիմնում, խոստումնալից, բանիմաց կադրերի պատրաստում և այլն), որոնք բխում են ժամանակի և մեր ժողովրդի առջև ծառացած խնդիրների լուծման պահանջից։ Վերջում Բ. Առաքելյանը նշեց, որ ակադեմիան պետք է ակտիվ մասնակցություն ցուցաբերի համաժողովրդական-հասարակական բոլոր խոշոր միջոցառումների մշակման և կիրառության հարցերում։

Ժողովում «Անթափոն արտադրությունը քնության պահպանության կարևորագույն պայմանն է» թեմայով զեկուցում կարդաց ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Առաքելյանը։

Բաժանմունքի 1988 թ. գործունեության արդյունքների քննարկմանը մասնակցեցին ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Մ. Ներսիսյանը, Ա. Հովհաննիսյանը, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամներ Վ. Խաչաբեկյանը, Հ. Սիմոնյանը, Հ. Ավետիսյանը, Վ. Բարխուդարյանը, պատմական գիտությունների դոկտորներ Ռ. Սահակյանը, Ա. Սիմոնյանը, Խ. Բաբսեղյանը։ Նրանք հավանություն տվեցին հաշվետու զեկուցմանը, բաժանմունքի 1988 թ. գործունեությունը գնահատեցին բավարար։ Նկատի ունեցողները հանգամանորեն խոսեցին պատմական գիտության վերակառուցման, պատմության պարբերացման վերանայման, պատմաբանների ընկերություն ստեղծելու, թուրք և ադրբեջանցի կեղծարարներին արժանի հակահարված տալու անհրաժեշտության և այդ նպատակով տարբեր լեզուներով մեր ժողովրդի պատմությունը «Հայաստանի պատմություն» խորագրով հրատարակելու, պատմական գիտության թեմատիկան կտրուկ փոփոխելու և այսօրվա պահանջներին համահունչ դարձնելու մասին։ Նշվեց, որ ոչ միայն հարկ է անդրադառնալ պատմության «սպիտակ բծերին», այլև նորովի դրել բազմաթիվ հարցեր, «Լեռնային Ղարաբաղ» պատմական ակնարկ-գրքույկը հայերեն և օտար լեզուներով թարգմանել և մեծ տպաքանակով հրատարակել։ Նկատի ունեցողները շեշտեցին, որ դարաբաղյան շարժումը վերակառուցման արդյունք էր, համաժողովրդական շարժում, և որ մեր գիտությունը դրան պետք է տա դիտական պատասխան, նշեցին, որ պատմաբանները մեծ պարտք ունեն ժողովրդի առաջ, պետք է միավորել բոլորի ուժերը և համատեղ պայքարել բունիաթովականության դեմ, հարկ է սկզբնաղբյուրների օգտագործումով ապացուցել, որ ադրբեջանցիները ոչ միայն հայերից, այլև մյուս հարևան ժողովուրդներից (օրինակ՝ պարսիկներից) յուրացրել են ազգային ու հոգևոր մշակույթի արժեքներ և մերկացնել նրանց քաղաքականության այդ կողմը։ Նկատվեց, որ Հայաստանի Գերագույն խորհուրդը պետք է հարց բարձրացնի երկրի ղեկավարության առաջ և պահանջի չեղյալ համարել Մոլոտովի և մյուսների հայտարարությունները, որոնք շոշափում են հայ ժողովրդի կենսական շահերը։ Խոսվեց նաև Հայաստանի էկոլոգիական վիճակի, հանրապետությունը ազատ տնտեսական գոտու վերածելու և տնտեսական ազատ գործունեություն ծավալելու մասին։ Մի շարք համոզիչ նկատառումներով հարց բարձրացվեց 1992 թ. Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում նոր

մարդահամար անցկացնելու մասին։ Նշվեց մասսայական ինֆորմացիայի միջոցների պասիվությունը համազգային խնդիրների ու հարցերի բարձրացման գործում, շեշտվեց, որ հայ պատմաբանները միահամուռ պաշտպանում են մայիսի 5-ին Մ. Ս. Գորբաչովին ուղղված զարաբաղյան «Բաց նամակը» և այլն։ Մտքերի փոխանակությունն ամփոփեց Բ. Առաքելյանը։

ՀԽՍՀ ԳԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Մայիսի 16-ին տեղի ունեցավ ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի տարեկան ժողովը։ Բաժանմունքի 1988 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին հաշվետու զեկուցմամբ հանդես եկավ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բրուտյանը։ Հաշվետու տարում բաժանմունքն անց է կացրել 1 ընդհանուր ժողով և բյուրոյի 18 նիստ, ասաց նա։ Շարունակվել են աշխատանքները ԽՄԿԿ XXVII համագումարի, ԽՄԿԿ Կենտկոմի հետագա պլենումների որոշումների կենսագործման ուղղությամբ։ Այդ որոշումների, ինչպես և համամիութենական XIX կուսակցական կոնֆերանսի նյութերի լույսի ներքո վերանայվել և ճշգրտվել են բաժանմունքի գիտահետազոտական պլանները։ Քննարկվել և հաստատվել են բաժանմունքի ինստիտուտների առաջնահերթ ուղղությունները, ՀԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան (1988 թ.) պլենումի որոշումների կատարման ուղղությամբ միջոցառումները։ Հաշվետու ժամանակաշրջանում բաժանմունքի բյուրոն քննարկել է մի շարք գիտակազմակերպական հարցեր. բաժանմունքի ինստիտուտների 1989 թ. գիտահետազոտական պլանները, 1989 թ. սոցիալիստական երկրների գիտական կազմակերպությունների հետ համագործակցության և կապիտալիստական ու զարգացող երկրների գիտական կազմակերպությունների հետ միջազգային գիտական կապերի վերաբերյալ միջոցառումների մասին առաջարկները, ասպիրանտների ատեստացիան և այլն։ Բաժանմունքի բյուրոյի 1988 թ. դեկտեմբերի 21-ի նիստում քննարկվել են բաժանմունքի, նրա ինստիտուտների, կոորդինացիոն և գիտական խորհուրդների և ընկերությունների 1988 թ. գործունեության հաշվետվությունները, և դրանց գործունեությունը գնահատվել է «բավարար»։

Զեկուցողը հանգամանորեն ներկայացրեց փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի ինստիտուտներում, գիտական խորհուրդներում ձեռք բերված կարևոր արդյունքները, նշեց, թե ինչ պրոբլեմների ուղղությամբ են ընթացել հետազոտությունները փիլիսոփայության և իրավունքի, հոգեբանության, բանասիրության և արվեստի բնագավառներում։ Այնուհետև Գ. Բրուտյանը անդրադարձավ ինստիտուտներում ձեռք բերված արդյունքներին, թվարկեց այն թեմաներն ու պրոբլեմները, որոնցով զբաղվում են գիտական աշխատակիցները։ Բաժանմունքի ինստիտուտների գծով 1988 թ. հրատարակվել է 15 գիրք, որից 7-ը՝ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի, 6-ը՝ Մ. Աբեղյանի անվան դրականության ինստիտուտի, 2-ը՝ արվեստի ինստիտուտի կողմից։ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գծով որոշ գրքեր հաշվետվությունը ներկայացնելու պահին գտնվել են տպագրության պրոցեսում։ Ինստիտուտների գծով շուրջ 20 աշխատանք գտնվում է հրատարակության պրոցեսում։ Բաժանմունքի ինստիտուտներում կատարվել է հետևյալ կառուցվածքային փոփոխությունը. 1988 թ. հունվարից ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի ՀԽՍՀ պատմության և մշակույթի հուշարձանների համահավաքի խմբի հիման վրա ստեղծվել է ՀԽՍՀ ԳԱ նախագահությանն առընթեր ՀԽՍՀ պատմության և մշակույթի հուշարձանների համահավաքի բաժին։ Արվեստի ինստիտուտի դիրեկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր Լ. Հ. Հախվերդյանը «Պարույր Սևակ» գրքի համար պարգևատրվել է Հայաստանի գրողների միության Մ. Նալբանդյանի անվան մրցանակով։

Այնուհետև Գ. Բրուտյանը հանգամանորեն խոսեց Լեռնային Ղարաբաղի իրավիճակի մասին, մանրամասն անդրադարձավ Արցախի հետ մշակութային կապերին, դեպուտատական ընտրությունների կարգին, նշեց դեմոկրատացման և հրապարակայնության բնագավառում հանրապետությունում և մասնավորապես ակադեմիայում տեղ գտած թերությունները։

Բաժանմունքի իսկական անդամների և թղթակից անդամների 1988 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցեց փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի տեղակալ, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ջաճուկյանը։

Փիլիսոփայության, բանասիրության և արվեստի բնագավառներում հանրապետության

բուհերի 1988 թ. հետազոտությունների արդյունքներին և կոորդինացիայի խնդիրներին անդրադարձավ բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի տեղակալ, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս է. Ջրբաշյանը:

Զեկուցումների շուրջ ծավալված մտքերի աչխույժ ու անկաշկանդ փոխանակությանը մասնակցեցին ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոսներ է. Ջրբաշյանը, է. Աղայանը, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամներ Հ. Թամրազյանը, է. Աբայանը, Վ. Բարխուդարյանը, բանասիրական գիտությունների դոկտորներ Ալ. Ջամարյանը, Ա. Եղիազարյանը, Լ. Հախվերդյանը, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Լ. Կարապետյանը, Ս. Դուլյանովան: Նրանք հավանություն տվեցին հաշվետու զեկուցմանը, բաժանմունքի 1988 թ. գործունեությունը դնահատեցին բավարար: Ելույթ ունեցողները խոսեցին ակադեմիային վայել տպարանի անհրաժեշտության, ակադեմիական թերթի հիմնադրման, մասսայական ինֆորմացիոն միջոցների տեղեկատվական աղավաղումների առաջն առնելու, 1988 թ. նոյեմբերին կայացած ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանի ընդհատման և ապա Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի շենքում տեղի ունեցած նստաշրջանը անօրինական համարելու փաստի վերաբերյալ, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջան հրավիրելու անհրաժեշտության, Սումգայիթի ոճրագործությանը քաղաքական գնահատական տալու և դատավարությունը այդ լույսի տակ անցկացնելու, Լեռնային Ղարաբաղում հատուկ կառավարման ստատուս սահմանելու և մարզի կենտրոնական մարմինների՝ մարզկոմի և մարզխորհրդի վերացման սխալ լինելու, Լեռնային Ղարաբաղը ադրբեջանացնելու քաղաքականության, «Ղարաբաղ» կոմիտեի անդամների ձերբակալության և նրանց ազատ արձակելու մասին: Շեշտվեց, որ ազգային հարցերը չի կարելի լուծել պատժիչ միջոցներով, և որ նման դեպքերում ազգը պետք է պաշտպանի իր իրավունքները: Նշվեց նաև, որ պետք է արժանի հակահարված տալ հայ և անվանի այլ գիտնականների դեմ մամուլում ադրբեջանցիների հրապարակումներին, պաշտպանել հայ հոգևոր և նյութական մշակույթը նրանց ոտնձգություններից, Միջին Ասիայի հայերի պաշտպանության համար կատարել պաշտոնական ակցիա, վերացնել ստալինյան ավտոնոմիզացիան և հասնել լենինյան ֆեդերացիայի ամրապնդմանը, մշակել ազգային ծրագիր, հանրապետության ղեկավարության և ժողովրդի, մտավորականության և ժողովրդի միջև առկա վիհը վերացնել: Մտքերի փոխանակությունն ամփոփեց Գ. Բրուտյանը:

Ժողովում լսվեցին զեկուցումներ: Իրավաբանական գիտությունների դոկտոր Վ. Ստեփանյանի զեկուցման թեման էր «Սոցիալիստական իրավական պետության ձևավորման հարցերը», բանասիրական գիտությունների դոկտոր Ն. Պառնասյանինը՝ «Ժամանակակից գրական հայերենի կազմավորման ընթացքը»: Ճարտարապետության թեկնածու Կ. Բալյանի զեկուցումը նվիրված էր Երևանի պատմական կենտրոնի և նրա զարգացման խնդիրներին: